


**ՄՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՏԵՂ ՀԱՄԱՅՆՔ**

**Համայնքի 2018 թվականի
ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ**



Կազմել է՝ համայնքի ղեկավար Ներսես Շադունցը

**Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2017թ-ի որոշմամբ
(նիստի ամսաթիվը)**

Տեղ 2017թ.

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
1. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ և ՈԼՈՐՏԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ	4
2. ՀԱՄԱՅՆՔԻ 2018 Թ. ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԸ և ՏՐԱՄԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՆՔԵՐԸ (ԸՍՏ ՈԼՈՐՏԵՐԻ) 6	
3. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2018Թ. ԾՐԱԳԻՐԸ.....	21
4. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՊԼԱՆԸ.....	25
5. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՊ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ և ԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԼԱՆԸ	27

Ներածություն

Տեղ համայնքի 2018թ. տարեկան աշխատանքային պլանը (ՏԱՊ-ը) նպատակ ունի արդյունավետ պլանավորման միջոցով բարելավել համայնքում կայացվող որոշումների որակը: Հիմք ունենալով համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը, ՏԱՊ-ը ուղղված է հստակեցնելու տարեկան կտրվածքով համայնքի զարգացմանն ուղղված ծրագրերը և միջոցառումները, դրանց իրականացման համար ներդրվող ռեսուրսներն ու ժամկետները: Որպես համայնքի տարեկան ծրագրային փաստաթուղթ, այն նպատակ ունի ներգրավել համայնքի ներքին և արտաքին ներդրողների հնարավորությունները՝ համայնքային խնդիրներն առավել արդյունավետ լուծելու գործում:

Տեղհամայնքի տարեկան աշխատանքային պլանը կազմվել է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության աջակցությամբ և «Համայնքների ֆինանսիստների միավորում» հասարակական կազմակերպություն կողմից մշակված «Համայնքի ՏԱՊ-ի մշակման մեթոդական ուղեցույց»-ի հիման վրա:

Տեղ համայնքի 2018թ. ՏԱՊ-ը բաղկացած է 5 հիմնական բաժիններից, որոնք կառուցված են ծրագրերի նպատակներից արդյունքներին հասնելու տրամաբանական հենքի վրա:

Համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները սահմանում են 2018թ. Տեղ համայնքում ՏԻՄ-երի լիազորությունների շրջանակներում սահմանված նպատակները, զարգացման հիմնական ուղղությունները և խթանները:

2018թ. նախատեսված ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը ներկայացված են ըստ բնակավայրերի ու դրանց արժեքների:

ՏԱՊ-ում ներկայացվում է նաև համայնքային սեփականություն հանդիսացող գույքի կառավարման տարեկան ծրագիրը՝ պլանավորված գործընթացները և գործողությունները:

ՏԱՊ-ում նախատեսված ծրագրերի ֆինանսավորման պլանը սահմանում է ֆինանսավորման այն աղբյուրները, որոնք պետք է ապահովեն դրանց իրականացումը:

ՏԱՊ-ի իրականացման արդյունավետությունը նախատեսվում է իրագործել ըստ մոնիթորինգի և գնահատման պլանի՝ կիսամյակային կամ տարեկան կտրվածքով:

1. Համայնքի տեսլականը և ոլորտային նպատակները

Համայնքի տեսլականը՝

Տեղըզարգացած գյուղատնտեսությամբ և էկոլոգիապես մաքուր գյուղմթերքների արտադրությամբ բազմաբնակավայր համայնք է, որն ունի զարգացած ենթակառուցվածքներ և ընդգրկված է գրավիչ զբոսաշրջային երթուղիներում:

Աղյուսակ 1. Համայնքի կայուն զարգացման ցուցանիշները

Ցուցանիշ	Ելակետային արժեք	Թիրախային արժեք
Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թվի տեսակարար կշիռը համայնքի ընտանիքների ընդհանուր թվի մեջ (%)	20	17
Համայնքի բյուջեի սեփական եկամուտների տեսակարար կշիռն ընդհանուր եկամուտների մեջ (%)	28	33
Համայնքում հաշվառված բնակիչների ընդհանուր թիվը (մարդ)	5985	6180
Համայնքում տվյալ տարվա ընթացքում ներդրումների ծավալը (հազ. դրամ)	309460.0	697421.7
Համայնքում գործող ՓՄՁ-ների քանակը և դրանցում աշխատատեղերի թիվը (հատ)	40	81

Աղյուսակ 2. Համայնքի ոլորտային նպատակները

Ոլորտային նպատակ	Վերջնական արդյունքի՝		
	Ցուցանիշ	Ելակետային արժեք*	Թիրախային արժեք*
Ոլորտ 1. Ընդհանուր: Ապահովել տեղական ինքնակառավարումը Տեղ բազմաբնակավայր համայնքում, ունենալ բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների արդյունավետ և թափանցիկ կառավարման համակարգ	Տեղական ինքնակառավարման մարմինների արդյունավետ, հասցեական, մասնակցային և ուղենշված գործունեություն, %	60	65
	Նոր համակարգի ձևավորմամբ ծառայությունների որակի ու հասանելիության բարելավում, %	25	30
Ոլորտ 2. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն: <ul style="list-style-type: none"> Կազմակերպել համայնքի քաղաքաշինական նորմերի, համայնքային գույքի և ենթակառուցվածքների, հանրային վայրերի պահպանումն ու զարգացումը Ապահովել համայնքի բնակիչների առողջության և շրջակա միջավայրի վրա աղբի բացասական ներգործության նվազեցումն ու չեզոքացումը 	Բարելավված համայնքային գույքի, ենթակառուցվածքների, հանրային վայրերի տեսակարար կշիռը %	50	65
	Սանիտարահիգիենիկ ու էկոլոգիական պայմանների ապահովումը համայնքի ընդհանուր տարածքում, % Հանրային տարածքների	45	50

<ul style="list-style-type: none"> Ստեղծել բնակության համար հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմաններ Ապահովել համայնքի քաղաքաշինական զարգացման նորմերը 	<p>մաքրության աստիճանը ընդհանուր հանրային տարածքների մեջ, %</p> <p>Համայնքի գլխավոր հատակագծի առկայությունը</p>	<p>30</p> <p>Առկա չէ</p>	<p>35</p> <p>Առկա է</p>
<p>Ոլորտ 3. Տրանսպորտ: Կազմակերպել համայնքի միջբնակավայրային կանոնավոր ուղևորափոխադրումները</p>	<p>Բնակավայրերի և համայնքային կենտրոնի միջև կանոնավոր ուղևորափոխադրումների առկայությունը</p>	<p>Առկա չէ</p>	<p>Առկա է</p>
<p>Ոլորտ 4. Կրթություն: Կազմակերպել նախադպրոցական կրթության որակյալ ծառայություններ</p>	<p>Նախադպրոցական կրթության ծառայության հասանելիությունը համայնքում %</p>	<p>35</p>	<p>50</p>
<p>Ոլորտ 5. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ: Կազմակերպել համայնքի մշակութային կյանքը, աջակցել մշակութային նախաձեռնությունների իրականացմանը, խթանել միջոցառումներին բնակիչների ակտիվ մասնակցությունը</p>	<p>Համայնքի մշակութային նախաձեռնություններին բնակիչների մասնակցությունը %</p> <p>Բնակիչների գոհունակությունը մշակութային կազմակերպությունների ծառայություններից %</p>	<p>25</p> <p>20</p>	<p>30</p> <p>30</p>
<p>Ոլորտ 6. Սոցիալական պաշտպանություն: Բարելավել համայնքի կարիքավոր ընտանիքների սոցիալական վիճակը</p>	<p>Համայնքում սոցիալապես անապահով խմբերի, կարիքավոր ընտանիքների վիճակի բարելավում, %</p>	<p>1</p>	<p>2</p>
<p>Ոլորտ 7. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում: Ապահովել համայնքի բնակիչների, ենթակառուցների և ՔՊ ուժերի պատրաստականությունը արտակարգ իրավիճակների և ՔՊ ժամանակ</p>	<p>Համայնքի բնակիչների, ենթակառուցների և ՔՊ ուժերի պատրաստականության բարձրացում, %</p>	<p>45</p>	<p>50</p>
<p>Ոլորտ 8. Գյուղատնտեսություն: Նպաստել համայնքում գյուղատնտեսության զարգացմանը</p>	<p>Գյուղատնտեսական տեխնիկայի մատչելիությունը բնակավայրերում %</p>	<p>55</p>	<p>65</p>

*Տես՝ ոլորտի վերջնական արդյունքների ցուցանիշների գնահատման սանդղակը Հավելված 1-ում:

2. Համայնքի 2018 թ. ծրագրերի ցանկը և տրամաբանական հենքերը (ըստ ոլորտների)

Աղյուսակ 3.ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված են համապատասխան ֆինանսական միջոցներով

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի արժեքը(հազ. դրամ)	ԲԲՀ-ի բնակավայրը
Ոլորտ 1. Ընդհանուր			
1	Համայնքային ծառայությունների արդյունավետ կառավարում, աշխատակազմի աշխատանքի արդյունավետության բարձրացում	4966.5	Բոլոր բնակավայրերում
2	Համայնքի աշխատակազմի պահպանում	83285.2	Բոլոր բնակավայրերում
3	Ծառայությունների մատուցման նոր համակարգի ձևավորում, ՀՈԱԿ-ի ստեղծում	32500.0	Բոլոր բնակավայրերում
Ընդամենը		120751.7	
Ոլորտ 2. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն			
4	Քաղաքաշինական գլխավոր հատակագծի մշակում	2000.0	Տեղ բնակավայր
5	Համայնքի ենթակառուցվածքների պահպանում	7550.0	Բոլոր բնակավայրերում
6	Ներհամայնքային հաղորդակցության ուղիների սպասարկում	108000.0	Բոլոր բնակավայրերում
7	Համայնքի ենթակառուցվածքների զարգացում	455684.9	Տեղ և Խնածախ բնակավայրերում
8	Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցում	41900.0	Բոլոր բնակավայրերում
Ընդամենը		615134.9	
Ոլորտ 3. Տրանսպորտ			
9	Ներհամայնքային տրանսպորտային կապի կազմակերպում	22400.0	Բոլոր բնակավայրերում
Ընդամենը		22400.0	
Ոլորտ 4. Կրթություն			
10	Նախադպրոցական կրթության ծառայության մատուցում համայնքում	42579.2	Տեղ, Կոռնիձոր, Խնածախ բնակավայրերում
Ընդամենը		42579.2	
Ոլորտ 5. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ			
11	Մշակութային կյանքի կազմակերպում համայնքում	7600.0	Բոլոր բնակավայրերում
Ընդամենը		7600.0	

Ոլորտ 6. Սոցիալական պաշտպանություն			
12	Սոցիալական աջակցություն անապահով խմբերին	5000.0	Բոլոր բնակավայրերում
Ընդամենը		5000.0	
Ոլորտ 7. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում			
13	ԱԻ և ՔՊ մասին բնակչության իրազեկության բարձրացում	300.0	Բոլոր բնակավայրերում
Ընդամենը		300.0	
Ոլորտ 8. Գյուղատնտեսություն			
14	Համայնքում գյուղատնտեսության զարգացման խթանում	68400.0	Բոլոր բնակավայրերում
Ընդամենը		68400.0	
Ընդհանուրը		882165.8	

Աղյուսակ 4. ՏԱՊ-ի ծրագրերը, որոնք ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով

Ծրագրեր, որոնք ապահովված չեն համապատասխան ֆինանսական միջոցներով, չեն նախատեսվել:

Աղյուսակ 5.ՏԱՊ-ով նախատեսված ծրագրերի տրամաբանական հենքերը՝ ըստ համայնքի ղեկավարի լիազորությունների ոլորտների

Ամփոփ նկարագիր	Արդյունքային ցուցանիշներ	Տեղեկատվության աղբյուրներ	Պատասխանատու	Ժամկետ	Ռիսկեր
Ոլորտ 1. Ընդհանուր					
<p>Ոլորտի նպատակ. Ապահովել տեղական ինքնակառավարումը Տեղ բազմաբնակավայր համայնքում, ունենալ բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների արդյունավետ, թափանցիկ կառավարման համակարգ</p>	<ul style="list-style-type: none"> •Տեղական ինքնակառավարման մարմինների արդյունավետ, հասցեական, մասնակցային և ուղենշված գործունեություն, 65% •Նոր համակարգի ձևավորմամբ ծառայությունների որակի ու հասանելիության բարելավում 30%-ով 	<p>Հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ</p>	<p>Համայնքի ղեկավար</p>	<p>1 տարի</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն</p>
Ծրագիր 1. Համայնքային ծառայությունների արդյունավետ կառավարում, աշխատակազմի աշխատանքի արդյունավետության բարձրացում					
<p>Ծրագրի նպատակ. Համայնքային ծառայությունների արդյունավետ կառավարում, աշխատակազմի աշխատանքի արդյունավետության բարձրացում</p>	<p>ՏԻՄ-երի աշխատանքների կազմակերպման արդյունավետությունը բարելավվել է 5%-ով</p>	<p>Հաշվետվություններ, համայնքի համացանցային կայք</p>	<p>Աշխատակազմի քարտուղար</p>	<p>1 տարի</p>	<p>-</p>
<p>Միջոցառումներ. 1.Համակարգչային ծառայությունների ձեռք բերում 2.Մասնագիտական և այլ ծառայությունների ձեռք բերում 3. Վերապատրաստում և ծառայությունների ձեռք բերում 4. Տեղ համայնքի աշխատակազմի գույքի, սարքավորումների և ծրագրերի արդիականացում</p>	<p>Ելքի ցուցանիշներ</p> <ul style="list-style-type: none"> •Ծրագրային թարմացումներ -2 •Հարկերի հաշվառման և հաշվարկման արդյունավետության մակարդակի բարձրացում- 10 % •Չափազրկող և պետական գրանցման ներկայացվող գույքային միավորների թիվը-85 •Կազմակերպված դասընթացների թիվը -12 •Ձեռքբերված ծառայությունների թիվը -2 •Ձեռքբերված գրասենյակային կահույքի միավորների թիվը -15 •ՁեռքբերվածՃԾ ծրագրերի թիվը -1 <p>Մուտքի ցուցանիշներ</p> <ul style="list-style-type: none"> •Համակարգիչների թիվը-3 •Աշխատակիցների թիվը-4 	<p>Տեղի համայնքապետարան, „ՏՀԶՎԿ,, ՀԿ, „Վեկտոր պլյուս,, ՍՊԸ ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ Գորիսի ս/գ</p>			

	<ul style="list-style-type: none"> • Միջոցառումների իրականացման ընդհանուր ծախսերը՝ 4966.5 հազ. դրամ, համայնքի բյուջե 				
Ծրագիր 2. Համայնքի աշխատակազմի պահպանում					
Ծրագրի նպատակ. Օրենքով ՏԻՄ-երին վերապահված լիազորությունների պատշաճ իրականացում համայնքում	ՏԻՄ-երի կողմից մատուցվող համայնքային (հանրային, ոչ վարչական բնույթի) ծառայությունների հասանելիությունը համայնքի բնակիչներին, 70%	Հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ	Աշխատակազմի քարտուղար	1 տարի	-
Միջոցառումներ. 1.Տեղ համայնքի աշխատակազմի պահպանություն՝ առանց բնակավայրերի վարչական ղեկավարների պահպանման ծախսերի 2.Արավուս բնակավայրի վարչական ղեկավարի պահպանում 3.Կորնիձոր բնակավայրի վարչական ղեկավարի պահպանում 4.Քարաշեն բնակավայրի վարչական ղեկավարի պահպանում 5.Խնածախ բնակավայրի վարչական ղեկավարի պահպանում 6.Խոզնավար բնակավայրի վարչական ղեկավարի պահպանում 7.Վաղատուր բնակավայրի վարչական ղեկավարի պահպանում	Ելքի ցուցանիշներ <ul style="list-style-type: none"> • Ավագանու նիստերի թիվը -10 • Վերապատրաստված աշխատակիցների թիվը – 8 • Համայնքային ծառայություն մատուցող կազմակերպությունների թիվը - 3 • Բնակավայրերի տարածքում մատուցվող հանրային ծառայությունների հասանելիությունն ավելացել է 5%-ով Մուտքի ցուցանիշներ <ul style="list-style-type: none"> • Համայնքի աշխատակազմի աշխատակիցների թիվը - 44 • Աշխատակիցների թիվը բնակավայրերում - 20 • Համայնքի կենտրոնում աշխատակիցների պահպանման ծախսեր -51200.0 հազ.դր • 6բնակավայրերում վարչական ղեկավարի պահպանման ծախսեր-32085.2 հազ. դր. • Միջոցառումների իրականացման ընդհանուր ծախսերը՝ 83285.2 հազ. դր., համայնքի բյուջե 	Տեղի համայնքապետարան			
Ծրագիր 3. Ծառայության մատուցման նոր համակարգի ձևավորում, ՀՈԱԿ-ի ստեղծում					

<p>Ծրագրի նպատակ. Բարձրացնել կոմունալ տնտեսության և գյուղատնտեսության ոլորտներում համայնքի բնակչությանը մատուցվող ծառայությունների հասանելիությունը և որակը</p>	<p>Կոմունալ տնտեսության և գյուղատնտեսության ոլորտներում ծառայությունների հասանելիությունը բնակավայրերում աճել է 30%-ով</p>	<p>Հաշվետվություններ, պայմանագրեր, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ</p>	<p>Համայնքի ղեկավարի տեղակալ</p>	<p>1 տարի</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն</p>
<p>Միջոցառումներ. 1. Ավտոպարկի կառուցում 2. Բոքսերի կառուցում 3. ՀՈԱԿ-ի ստեղծում</p>	<p>Ելքի ցուցանիշներ. • Կառուցված ավտոպարկ – 1 հատ, • Կառուցված բոքսեր – 5 հատ, • Ստեղծված ՀՈԱԿ – 1, • Նոր ծառայությունների մատուցում – առկա է Մուտքի ցուցանիշներ. • ՀՈԱԿ-ի աշխատակազմ – 6 հաստիք, • Դոնոր կազմակերպություն -1 • Կապալառու կազմակերպություն -1 • Ընդհանուր արժեքը – 32,500.0 հազ.դրամ, այդ թվում՝ համայնքի բյուջեից ներդրում – 14,358.2 հազ. դրամ</p>	<p>Տեղի համայնքապետարան</p>			<p>ՀՏՁՀ-ն ուշացնում է ծրագրով նախատեսված աշխատանքների իրականացումը</p>
<p>Ոլորտ 2. Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն</p>					
<p>Ոլորտի նպատակներ.</p> <ul style="list-style-type: none"> Կազմակերպել համայնքի քաղաքաշինական նորմերի, համայնքային գույքի և ենթակառուցվածքների, հանրային վայրերի պահպանումն ու զարգացումը Ապահովել համայնքի բնակիչների առողջության և շրջակա միջավայրի վրա աղբի բացասական ներգործության նվազեցումն ու չեզոքացումը Ստեղծել բնակչության համար 	<ul style="list-style-type: none"> Բարելավված համայնքային գույքի, ենթակառուցվածքների, հանրային վայրերի տեսակարար կշիռը 65% Մանիտարահիգիենիկ ու էկոլոգիական պայմանների ապահովումը համայնքի ընդհանուր տարածքում, 50 % Հանրային տարածքների մաքրության աստիճանը ընդհանուր հանրային տարածքների մեջ, 35% 	<p>Հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ</p>	<p>Համայնքի ղեկավարի տեղակալ</p>	<p>1 տարի</p>	<p>-</p>

<p>հարմարավետ և էկոլոգիապես անվտանգ պայմաններ</p> <ul style="list-style-type: none"> • Ապահովել համայնքի քաղաքաշինական զարգացման նորմերը 	<ul style="list-style-type: none"> • Համայնքի գլխավոր հատակագծի առկայությունը, առկա է 				
Ծրագիր 1. Տեղբնակավայրի քաղաքաշինական գլխավոր հատակագծի մշակում					
<p>Ծրագրի նպատակ. Բնակավայրում քաղաքաշինական նորմերի ապահովում</p>	<p>Տեղ բնակավայրի գլխավոր հատակագծի առկայությունը, առկա չէ/առկա է</p>	<p>Հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ</p>	<p>Համայնքի ղեկավար</p>	<p>1 տարի</p>	<p>-</p>
<p>Միջոցառումներ. 1.Տեղ բնակավայրի քաղաքաշինական գլխավոր հատակագծի պատվիրում և ձեռք բերում</p>	<p>Ելքի ցուցանիշներ</p> <ul style="list-style-type: none"> •Քաղաքաշինական ծրագրերի իրականացման հնարավորություն –առկա է •Քաղաքաշինության ոլորտում սպասարկման արագության և օպերատիվության աճ -20%-ով •Գլխավոր հատակագիծ-1 <p>Մուտքի ցուցանիշներ</p> <ul style="list-style-type: none"> •Միջոցառումներում ընդգրկված աշխատակիցների թիվը –3 •Հատակագծվող մակերեսը- 205հա •Միջոցառման իրականացման ընդհանուր ծախսերը` 2000.0 հազ. դրամ, համայնքի բյուջե 	<p>Տեղի համայնքապետարան</p>			
Ծրագիր 2. Համայնքի ենթակառուցվածքների պահպանում					
<p>Ծրագրի նպատակ. Համայնքային ենթակառուցվածքների պահպանում և օգտագործում</p>	<ul style="list-style-type: none"> • Խմելու ջրի բնականոն մատակարարման ապահովում – 24 ժամ • Փողոցներում երթևեկության անվտանգության աճ - 3%-ով 	<p>Հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ</p>	<p>Համայնքի ղեկավարի տեղակալ</p>	<p>1 տարի</p>	<p>-</p>
<p>Միջոցառումներ. 1Խմելու ջրի մատակարարման համակարգի սպասարկում</p>	<p>Ելքի ցուցանիշներ</p> <ul style="list-style-type: none"> •Սպասարկվող խմելու ջրի մատակարարման ցանցերի քանակը -9 	<p>Տեղի համայնքապետարան</p>			

<p>2.Փողոցային լուսավորության համակարգի սպասարկում</p>	<ul style="list-style-type: none"> •Ջրամատակարարումից օգտվող բնակիչների թիվը, 3422 մարդ •Վթարների թվի նվազեցում, 5%-ով •Լուսավորվող փողոցների քանակը - 31 •Անվտանգ երթևեկություն <p>Մուտքի ցուցանիշներ</p> <ul style="list-style-type: none"> •Տեխնիկական միջոցներ-2 •Աշխատակիցներ -2 •Փոխարինվող մասեր - 50 •Միջոցառումների իրականացման ընդհանուր ծախսերը՝ 7550.0 հազ. դրամ, համայնքի բյուջե 				
--	--	--	--	--	--

Ծրագիր 3. Ներհամայնքային հաղորդակցության ուղիների սպասարկում

<p>Ծրագրի նպատակ. Բարեկարգ ճանապարհներ և երթուղիներ</p>	<p>Բարեկարգված ճանապարհների տեսակարար կշռի աճը ընդհանուրի մեջ,40%</p>	<p>Հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ</p>	<p>Համայնքի ղեկավարի տեղակալ</p>	<p>1 տարի</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն</p>
<p>Միջոցառումներ. 1.Ճանապարհային սպասարկման մեխանիզմների ձեռքբերում 2. Միջբնակավայրային, ներհամայնքային և դաշտամիջյան ճանապարհների սպասարկում</p>	<p>Ելքի ցուցանիշներ</p> <ul style="list-style-type: none"> • Ձեռքբերված էքսկավատոր JCB 3cx , գրեյդեր՝ FC-10-07, ինքնաթափ՝ Կամազ 65115-776058-42, հիդրոմուրճ, տրակտոր JCB-K • Բարեկարգվող միջբնակավայրային ճանապարհների թիվը - 3 • Բարեկարգվող ներհամայնքային փողոցների թիվը -7 • Բնակիչների բավարարվածությունը երթևեկությունից 70% <p>Մուտքի ցուցանիշներ</p> <ul style="list-style-type: none"> • Աշխատողների թիվը - 3 • Սպասարկվող ճանապարհների երկարությունը - 150կմ 	<p>Տեղի համայնքապետարան</p>			

	<ul style="list-style-type: none"> • Տեխնիկական միջոցներ-5 • Ընդհանուր արժեքը – 108000.0 հազ.դրամ, այդ թվում՝ համայնքի բյուջեից ներդրում – 7100.0 հազ. դրամ 				
Ծրագիր 4. Համայնքի ենթակառուցվածքների զարգացում					
Ծրագրի նպատակ. Համայնքային ենթակառուցվածքների զարգացում	<ul style="list-style-type: none"> • Բարելավված պայմաններ համայնքի աշխատակազմի և բնակիչների սպասարկման համար – առկա է • Կանոնավոր ջրամատակարարում և ջրահեռացում – 24 ժամ • Նախադպրոցական կրթության և դաստիարակության ծառայության հասանելիությունը համայնքում 60% 	Հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ	Համայնքի ղեկավարի տեղակալ	1 տարի	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն
Միջոցառումներ. 1. Համայնքի վարչական շենքի կապիտալ նորոգում 2. Համայնքի Խնածախ բնակավայրում խմելու ջրի ցանցի և կոյուղու կապիտալ նորոգում 3. Տեղ բնակավայրի թիվ 1 ՆՈՒՀ-ի շենքի կապիտալ նորոգում	Ելքի ցուցանիշներ <ul style="list-style-type: none"> • Վերանորոգված վարչական շենքի տանիքի մակերեսը՝ 240քմ • Վերանորոգված վարչական շենք 377.7քմ • Վարչական շենքի ջեռուցում –առկա է • Վերանորոգված խմելու ջրի ցանցերի թիվը -1 • Վերանորոգված ջրահեռացման ցանցերի թիվը -1 • Վերանորոգված նախակրթարանների մակերեսը՝ 968քմ • ՆՈՒՀ-ի վերանորոգված տանիքի մակերեսը՝ 800քմ Մուտքի ցուցանիշներ <ul style="list-style-type: none"> • Վարչական շենքերի թիվը -1 • Խմելու ջրի ցանցերի թիվը -1 • Նախակրթարանի շենքերի թիվը -1 • Մրցույթների կազմակերպում - 3 • Կապալառու պայմանագրերի թիվը – 3 • Դոնոր կազմակերպությունների թիվը -2 • Միջոցառումների իրականացման 	Տեղի համայնքապետարան			Կապալառուների ձախողումներ

	<p>ընդհանուր ծախսերը՝ 455684.9 հազ. դրամ, այդ թվում՝</p> <ul style="list-style-type: none"> • 1. KFW բանկ – 220000.0 հազ. դր., • 2. ՀՏՁՀ - 235684.9 հազ. դր. 				
Ծրագիր 5. Աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների մատուցում					
<p>Ծրագրի նպատակ. Մաքուր համայնք բնակիչների համար</p>	<p>Սանիտարահիգիենիկ ու էկոլոգիական բարվոք պայմանների ապահովումը համայնքի ընդհանուր տարածքում, 50 %</p>	<p>Հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ</p>	<p>Նորաստեղծ ՀՈԱԿ-ի տնօրեն</p>	<p>1 տարի</p>	<p>Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն</p>
<p>Միջոցառումներ. 1. Աղբատար մեքենայի և աղբամանների ձեռքբերում 2. Աղբահանության ծառայության կազմակերպում</p>	<p>Ելքի ցուցանիշներ</p> <ul style="list-style-type: none"> • Աղբատար մեքենա - 1 • Աղբամաններ – 30 • Աղբահանությունից օգտվող բնակիչների թիվը - 4000 • Աղբահանության հաճախականությունը՝ շաբաթական 1 անգամ • Աղբամանների ախտահանում – ամսական 1 անգամ • «Մաքուր համայնք» տեղեկատվական միջոցառումներ - 5 անգամ • Աղբահանության ծառայության հասանելիությունը բնակավայրերում 90% • Համայնքի սանմաքրման ենթակա տարածքների ավելացում - 30% <p>Մուտքի ցուցանիշներ</p> <ul style="list-style-type: none"> • Միջոցառումներում ընդգրկված աշխատակիցների թիվը – 2 • Տեխնիկական միջոցներ – 2 • Դոնոր կազմակերպության պայմանագիր - 1 • Միջոցառումների իրականացման ընդհանուր ծախսերը՝ 41900.0 հազ. դրամ, 	<p>Նորաստեղծ ՀՈԱԿ</p>			

	որից համայնքի բյուջեից ներդրում՝ 10000.0 հազ. դր.				
Ոլորտ 3. Տրանսպորտ					
Ոլորտի նպատակ. Կազմակերպել համայնքի միջբնակավայրային կանոնավոր ուղևորափոխադրումները	Բնակավայրերի և համայնքային կենտրոնի միջև կանոնավոր ուղևորափոխադրումներ առկա է	Հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ	Համայնքի ղեկավարի տեղակալ	1 տարի	Տրանսպորտի մատակարարման ուշացումներ
Ծրագիր 1. Ներհամայնքային տրանսպորտային կապի կազմակերպում					
Ծրագրի նպատակ. Ներհամայնքային հասարակական տրանսպորտի կանոնավոր աշխատանքի ապահովում	Հասարակական տրանսպորտի հասանելիությունը բնակավայրերում -100%	Հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ	Համայնքի ղեկավարի տեղակալ	Օրական 2 անգամ	Չվացուցակի ապահովում
Միջոցառումներ. 1. Միկրոավտոբուսների ձեռք բերում 2. Բնակավայրերի և համայնքի կենտրոնի միջև ուղևորափոխադրումների կազմակերպում	Ելքի ցուցանիշներ <ul style="list-style-type: none"> • Ձեռքբերված միկրոավտոբուսներ – 2 • Սպասարկվող բնակավայրեր -7 • Ներհամայնքային տրանսպորտի ցուցանիշների թիվը /շաբաթական/ -215 • Տաքսի ծառայություններից օգտվող բնակիչների թվի նվազում -10 %-ով • Տեղի թիվ 1 վերանորոգված ՆՈՒՀ-ի սաների թվի ավելացում Կորնիձոր, Արավուս, Քարաշեն բնակավայրերից - 10% • Կանոնավոր սպասարկման մակարդակը – 80% Մուտքի ցուցանիշներ <ul style="list-style-type: none"> • Վարորդների թիվը -2 • Տրանսպորտային միջոցների թիվը – 2 • Դոնոր կազմակերպության պայմանագիր-1 • Միջոցառման իրականացման ընդհանուր ծախսերը՝ 22400,0 հազ. դրամ, ՀՏԶՀ 	Տեղի համայնքապետարան			
Ոլորտ 4. Կրթություն					

<p>Ոլորտի նպատակ. Կազմակերպել նախադպրոցական կրթության որակյալ ծառայություններ</p>	<p>Նախադպրոցական կրթության ծառայության հասանելիությունը համայնքում-50%</p>	<p>Հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ</p>	<p>Համայնքի ղեկավար</p>	<p>1 տարի</p>	<p>-</p>
<p>Ծրագիր 1. Նախադպրոցական կրթության ծառայության մատուցում</p>					
<p>Ծրագրի նպատակ.Նախադպրոցական որակյալ կրթության կազմակերպում</p>	<p>Մատուցվող նախադպրոցական կրթության ծառայության հասանելիությունը համայնքում -3 բնակավայր</p>	<p>Հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ</p>	<p>«Տեղի թիվ 1 ՆՈՒՀ» , «Տեղի թիվ 2 ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ների տնօրեններ</p>	<p>1 տարի</p>	<p>-</p>
<p>Միջոցառումներ. 1. «Տեղի թիվ 1 ՆՈՒՀ» , «Տեղի թիվ 2 ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ների պահպանություն 2. Ծառայությունների մատուցում Կոռնիձոր, Խնածախ բնակավայրերում 3. Համակարգչային տեխնիկայի և հաշվապահական ծրագրի ձեռք բերում</p>	<p>Ելքի ցուցանիշներ • Ծառայությունից օգտվող երեխաների թիվը – 120 • Մանկի ապահովումը օրվա ընթացքում – 2 անգամ • Ծառայությունից օգտվող բնակավայրերի թիվը -3 • Կրթական և դաստիարակչական բաղադրիչը ընդհանուր մատուցվող ծառայության մեջ – 60%</p> <p>Մուտքի ցուցանիշներ • Աշխատակիցների թիվը – 36 • ՆՈՒՀ-երի թիվը -2 • Նոր համակարգչային տեխնիկա -1 • Նոր ՀԾ ծրագիր-1 • Միջոցառման իրականացման ընդհանուր ծախսերը՝ 42579.2 հազ. դրամ, համայնքի բյուջե</p>	<p>«Տեղի թիվ 1 ՆՈՒՀ» , «Տեղի թիվ 2 ՆՈՒՀ» ՀՈԱԿ-ներ</p>			
<p>Ոլորտ 5. Մշակույթ և երիտասարդության հետ տարվող աշխատանքներ</p>					

<p>Ոլորտի նպատակ. Կազմակերպել համայնքի մշակութային կյանքը, աջակցել մշակութային նախաձեռնությունների իրականացմանը, խթանել միջոցառումներին բնակիչների ակտիվ մասնակցությունը</p>	<p>Համայնքի մշակութային նախաձեռնություններին բնակիչների մասնակցությունը 30%</p> <p>Բնակիչների գոհունակությունը մշակութային կազմակերպությունների ծառայություններից 30%</p>	<p>Հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ</p>	<p>Համայնքի ղեկավար</p>	<p>1 տարի</p>	<p>-</p>
<p>Ծրագիր 1. Մշակութային կյանքի կազմակերպում</p>					
<p>Ծրագրի նպատակ. Ակտիվացնել համայնքի մշակութային կյանքը</p>	<p>Մշակութային միջոցառումների ավելացում 5%</p>	<p>Հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ</p>	<p>Մշակույթի ոլորտի կազմակերպիչ</p>	<p>1 տարի</p>	<p>-</p>
<p>Միջոցառումներ.</p> <ol style="list-style-type: none"> 1. Ապահովել համայնքում մշակութային կյանքի կազմակերպումը, հոգալ տոնական միջոցառումների հավուր պատշաճի իրականացումը 2. Տեղ, Խոզնավար և Կոռնիձոր բնակավայրերի մշակույթի տների և գույքի մասնակի նորոգում, տեխնիկական միջոցների ձեռքբերում 3. Սպորտլանդիաների կազմակերպում 	<p>Ելքի ցուցանիշներ</p> <ul style="list-style-type: none"> •Մշակութային միջոցառումների թիվը – 13 •Միջոցառումներին մասնակիցների թիվը – մոտ 2000 մարդ •Տեղի մշակույթի տան համար երաժշտական գործիքների և համակարգչի ձեռքբերում – 7 միավոր •Կոռնիձորի մշակույթի տան նորոգված նստարաններ – 180 նստարան •Խոզնավարի մշակույթի տան մասնակի նորոգում-1 •Սպորտլանդիաների մասնակիցների թիվը –500 մարդ •Մարզական միջոցառումների թիվը -3 •Մշակութային կյանքի ակտիվացում – առկա է <p>Մուտքի ցուցանիշներ</p> <ul style="list-style-type: none"> •Միջոցառումների կազմակերպմանը ներգրավված աշխատակիցների թիվը -5 •Տեխնիկական միջոցների թիվը -7 միավոր •Պայմանագրեր-2 	<p>Տեղի համայնքապետարան</p>			

	<ul style="list-style-type: none"> •Մարգահրապարակ-1 •Միջոցառումների իրականացման ընդհանուր ծախսերը՝ 7600.0 հազ. դրամ, համայնքի բյուջե 				
Ոլորտ 6. Սոցիալական պաշտպանություն					
Ոլորտի նպատակ. Բարելավել համայնքի կարիքավոր ընտանիքների սոցիալական վիճակը	Համայնքում սոցիալապես անապահով խմբերի, կարիքավոր ընտանիքների վիճակի բարելավում, 2%	Հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ	Համայնքի ղեկավար	1 տարի	-
Ծրագիր 1. Սոցիալական աջակցություն անապահով խմբերին					
Ծրագրի նպատակ. Ապահովել սոցիալական աջակցության նպատակային և թիրախային իրագործումը	Սոցիալական աջակցություն ստացող անապահով ընտանիքների տեսակարար կշիռը համայնքում առկա սոցիալապես կարիքավոր ընտանիքների մեջ, 60%	Հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ	Հանձնաժողով	1 տարի	-
Միջոցառումներ 1. Դրամական օգնությունների տրամադրում սոցիալապես կարիքավոր ընտանիքներին	Ելքի ցուցանիշներ <ul style="list-style-type: none"> •Համայնքի սոցիալապես անապահով, կարիքավոր և առողջական խնդիրներ ունեցող և աջակցություն ստացող ընտանիքների թիվը -80 •Համայնքի նորաձիններին տրվող միանվագ օգնություն ստացող ընտանիքների թիվը - 90 •Բնակիչների գոհունակությունը սոցիալական ծրագրերից 50% Մուտքի ցուցանիշներ <ul style="list-style-type: none"> •Միջոցառման իրականացման ընդհանուր ծախսերը՝ 5000.0 հազ. դր., համայնքի բյուջե 	Տեղի համայնքապետարան			
Ոլորտ 7. Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանություն և քաղաքացիական պաշտպանության կազմակերպում					
Ոլորտի նպատակ. Ապահովել համայնքի բնակիչների, ենթակառուցվածքների և ՔՊ ուժերի պատրաստակալությունը	Համայնքի բնակիչների, ենթակառուցվածքների և ՔՊ ուժերի պատրաստակալության բարձրացում	Հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման	Համայնքի ղեկավար	1 տարի	-

արտակարգ իրավիճակների և ՔՊ ժամանակ		արդյունքներ			
Ծրագիր 1. ԱԻ և ՔՊ մասին իրազեկության բարձրացում					
Ծրագրի նպատակ. Բարձրացնել բնակիչների և կառույցների իրազեկությունը արտակարգ իրավիճակների և ՔՊ մասին	Արտակարգ իրավիճակների և ՔՊ մասին իրազեկված մարդկանց տեսակարար կշիռը ընդհանուր բնակչության մեջ 7%	Հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ	Համայնքի ղեկավարի տեղակալ	1 տարի	-
Միջոցառումներ. 1. ՔՊ և ԱԻ ուսումնական վարժանքների կազմակերպում 2. ՔՊ և ԱԻ ժամանակ ճիշտ կողմնորոշվելու մասին տեղեկատվական բուկլետների պատրաստում և տարածում բնակչության շրջանում	Ելքի ցուցանիշներ • Վարժանքների մասնակիցների թիվը -100 • Իրազեկված բնակիչների թիվը -400 • Կազմակերպական կարողությունների բարելավում-10% Մուտքի ցուցանիշներ • Միջոցառմանը ներգրավված աշխատակիցների թիվը -6 • Բուկլետների թիվը -100 • ՔՊ և ԱԻ միջոցառումների թիվը -1 • Միջոցառման իրականացման ընդհանուր ծախսերը՝ 350.0 հազ. դրամ, համայնքի բյուջե	Տեղի համայնքապետարան			
Ոլորտ 8. Գյուղատնտեսություն					
Ոլորտի նպատակ. Նպաստել համայնքում գյուղատնտեսության զարգացմանը	Գյուղատնտեսական տեխնիկայի մատչելիությունը բնակավայրերում 65%	Հաշվետվություններ, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ	Համայնքի ղեկավար	1 տարի	Համապատասխան մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների անբավարարություն
Ծրագիր 1. Համայնքում գյուղատնտեսության զարգացման խթանում					

Ծրագրի նպատակ. Գյուղատնտեսության արտադրանքի աճի ապահովում	Համայնքում բավարար գործող գյուղտեխնիկայի առկայությունը - 80%	Հաշվետվություն, մոնիթորինգի և գնահատման արդյունքներ	Նորաստեղծ ՀՈԱԿ-ի տնօրեն	1 տարի	Ֆինանսավորման ուղացումներ
